# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Նոր գյուղ բնակավայր 25.04.2025 թ.

2025 թվականի ապրիլի 25-ին՝ ժամը 14:00-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր գյուղ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Հատշին քոնսթրաքթ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր Գյուղ բնակավայրում հասարակական նշանակության օբյեկտի վերակառուցում բնակելի թաղամասի և նոր մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանը: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Հարությունյանը նշեց, որ Օրենքի պահանջով կազմակերպվել է հանրային 2-րդ լսում, որի նպատակն է ազդակիր բնակավայրին և այլ շահագրգիռ անձանց մասնակից դարձնել փորձաքննության գործընթացին և լսել նաև նրանց կարծիքները: Նա ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Նախաձեռնողի ներկայացուցիչ Արման Խաչատրյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության տեխնիկա-տնտեսական ցուցանիշները, նախատեսվող գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, ներկայացրեց շինարարության աշխատանքների կազմակերպման միջոցառումները և շինարարության փուլում նախատեսվող

աշխատանքները: Նա ներկայացրեց նախատեսվող բնակելի համալիրի կառուցման ընթացքում նախատեսվող բնապահպանական ռիսկերի նվազեցմանն ուղղված նախատեսվող միջոցառումները՝ մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, հողի որակի հետ կապված: Նշեց, որ հիմնական ազդեցությունները նախատեսվում են կապված փոշու արտանետումների հետ, որի ազդեցությունը մեղմացնելու նպատակով նախատեսվել են միջոցառումներ՝ օրինակ, պարբերաբար իրականացվելու է ջրցան: Նա նշեց, որ բոլոր ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվելուց հետո Հարությունյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ իրենց առաջարկությունները, դիտողությունները ներկայացնելու և հուզող հարցերը հնչեցնելու համար:

Բնակիչներից մեկը հարց բարձրացրեց աղմուկի առաջացման վերաբերյալ, որին ի պատասխան Խաչատրյանը նշեց, որ տեխնիկան միաժամանակ չի աշխատելու, որպեսզի աղմուկի մակարդակը պահպանվի նորմայի սահմաններում, բացի այդ, շին. աշխատանքները կատարվելու են միայն ցերեկային ժամերին:

Քննարկվեցին նաև թաղամասի կառուցման հետ կապված այլ հարցեր:

Քննարկման ավարտին ներկաները նշեցին, որ ողջունում են նախատեսվող գործունեության իրականացումը և մաղթեցին հաջողություն:

Ք. Հարությունյանը ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչներ, համայնքի և նախաձեռնողի ներկայացուցիչները:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

**Վարող և քննարկումների պատասխանատու՝** **Ք. Հարությունյան**

**«Հատշին քոնսթրաքթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝** **Ա. Խաչատրյան**